

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան

■ Ենթարուսների
■ Աջակցման
■ Կենտրոն



ՏԵՂԵԿԱԹԵՂԹ #01



Հունվար 2021

Երևան, Հայաստան

Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ	3
Սննդի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	9
R&D	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
Կոսմետիկա	14
Առողջապահություն	16
Այլ ոլորտներ	18
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ	20
Նորություններ և միջոցառումներ	24

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մանդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Արկտիկական սուպեր սնունդ արտադրող ֆիննական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆիննական ընկերությունը, որը մեծ սեր է տածում արկտիկական բնության հանդեպ, արտադրում է չորացրած և փոշիացրած հապալասներ, կոճապղպեղներ և լոռամրգներ, ինչպես նաև շագալի սունկ և կանադական եղևնու բողբոջի փոշիներ: Ընկերությունն իր գերհագեցած ապրանքատեսակներով մուտք է գործում նոր շուկաներ և փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/bac6af5c-7776-4028-a24f-7d7bec3afe2b>

Ծածկագիր. BOFI20200116001



Զովացուցիչ ըմպելիքների արտադրության մեջ մասնագիտացած իտալական ըմպելիքներ արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ըմպելիքների ոլորտի իտալական երկար տարիներ գործող ընկերությունը մասնագիտացած է զովացուցիչ և գազավորված ըմպելիքների արտադրության մեջ: Ընկերությունը երկար տարիներ ակտիվ գործունեություն է ծավալել տեղական շուկայում՝ ներկայանալով ոլորտի առաջատարի դիրքում: Ընկերությունը ցանկանում է նոր շուկաներ մուտք գործել՝ արտերկրի նոր դիստրիբյուտորների միջոցով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fee258de-48fe-4884-9ceb-d3cc9fb57651>

Ծածկագիր. BOIT20191219002

Դանիական ընկերությունը փնտրում է սննդի բաղադրիչների դիստրիբյուտորներ՝ իր կողմից արտադրվող երկար պահպանվող խյուսի համար



Դանիական սփին-աութ ընկերությունը մշակել է արտոնագրված արտադրական գործընթաց՝ ավելցուկային մրգերն ու բանջարեղենը օգտագործելու և դրանք երկար պահպանվող խյուս դարձնելու համար: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր բաղադրիչների մեծածախ վաճառողների, ինչպես նաև վերամշակված մթերքների արտադրողների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5d73ae51-e488-4a81-b9b1-e5842b0f84d4>

Ծածկագիր. BODK20201215001

Բարձրորակ, պրեմիում դասի, առանց շաքարի և քաղցրացուցիչների մրգային ծամվող մարմելադ արտադրող ընկերությունը փնտրում է մեծածախ վաճառողներ և դիստրիբյուտորներ

Այս ընկերությունն աճել է ընտանեկան բիզնեսից: Այն սկսել է իր գործունեությունը մրգերի աճեցման Սաբուլճ-Սատմար-Բերեգ շրջանի միջնաբերդում (Հունգարիա): Ընկերության հումքը բարձրորակ մրգերն են, որոնք ապահովում են արտադրանքի համի և բաղադրության բարձր որակը: ՓՄՁ-ն կոչված է պատրաստելու համեղ և առողջ ծամվող քաղցրավենիքներ տարբեր տարիքի մարդկանց համար: Ընկերությունը հետաքրքրված է դիստրիբյուտորների և մեծածախ վաճառողների հետ համագործակցությամբ՝ առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/72012f04-735c-4078-8993-cef46b14fb19>

Ծածկագիր. BOHU20190717001

Առողջ սննդի ոլորտում գործող իսպանական ընկերությունը փնտրում է օրգանական ալերգենազերծ խորտիկներ արտադրող ընկերություն

Մալթոբիայում գտնվող իսպանական ընկերությունը հիմնականում շահագրգռված է առողջ սննդի արտադրատեսակների ընդլայնմամբ: Ապրանքներ քիչ աղով, տրանսձարպով, շաքարով և ավելի շատ մանրաթելերով, ինչպես նաև առանց ալերգենի և գլյուտեն չպարունակող արտադրանքեր: Ընկերությունն արտադրական համաձայնագրի ներքո փնտրում է արտադրող ընկերություններ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a89cb5d3-11e6-4d01-8523-c5a02066b86am>

Ծածկագիր. BOES20201215001

Օրգանական արտադրանքի մեջ մասնագիտացած իտալական ընկերությունը առևտրային գործընկերներ է փնտրում Եվրոպայում

Պուգլիայում տեղակայված իտալական ընկերությունն արտադրում և տարածում է իտալական ավանդություններով արված ձեռագործ, օրգանական, սուպեր բուսական և հացաբուլկեղենային արտադրանք: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ՝ տարածման

ծառայությունների և (կամ) առևտրային գործակալությունների համաձայնագրերի ներքո համագործակելու համար՝ Եվրոպայում նոր շուկաներում ընդլայնվելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7840f8d9-bd36-49bb-b241-dade5fc459bc>

Ծածկագիր . BOIT20201229001

Գործարար համագործակցության հարցումներ

Դանիական սփին-աութ ընկերությունը երկարաժամկետ մատակարարման համաձայնագրի ներքո փնտրում է մրգերի և բանջարեղենի ավելցուկի մատակարարներ

Դանիական համալսարանի սփին-աութը արտոնագրված տեխնոլոգիա է մշակել չիրացված մրգերն ու բանջարեղենը խյուսի վերածելու համար, որը հարմար է սննդի վերամշակման արդյունաբերությունում օգտագործելու նպատակով: Որպեսզի շարունակի ընդլայնել իր գործունեությունը, ընկերությունը ցանկանում է կնքել մատակարարման համաձայնագիր մեծ քանակությամբ մրգեր և բանջարեղեն արտադրողների հետ, որոնք պարբերաբար ունենում են մեծ քանակությամբ ավելցուկ, չվաճառվող պաշար, այդ թվում՝ փափուկ մրգերի, հասապտուղների, խնձորի, տանձի, գազարի, ինչպես նաև բազուկի մշակաբույսեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/95559ba2-8180-4526-9f74-caec07fec0ea>

Ծածկագիր . BRDK20201216001

Խորվաթական ընկերությունը, որը տարածում է բնական արտադրատեսակները և սուպեր սննդամթերքները, փնտրում է օրգանական սննդամթերք արտադրողներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Խորվաթական սկսնակ ընկերությունը, որը մասնագիտացած է ֆիտոթերապիայի խորհրդատվության, բնական արտադրանքի արտադրության և տարածման ոլորտում, փնտրում է օրգանական սուպերսնունդ արտադրողներ, որոնք ցանկանում են մուտք գործել խորվաթական շուկա: Ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր . BRHR20200803001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Պաշտպանական և բազմակի օգտագործման տեքստիլ լուծումներ արտադրող պորտուգալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրական համաձայնագրեր

Պորտուգալական ընկերությունը, որն արտադրում է բժշկական անջրանցիկ տեքստիլ, մեկանգամյա օգտագործման ապրանքներ նախատեսված անձնական պաշտպանիչ սարքավորումների համար, այժմ փորձում է ընդլայնել իր վաճառքը Եվրոպայում տարածման/արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a9c3329a-7356-4b28-b972-0a7e19d93a45>

Ծածկագիր. BOPT20201215001

Նորաձևության դիզայները Կոստվոյից դիստրիբյուտորներ է փնտրում՝ տարածման ծառայությունների, ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Նորաձևության դիզայները Կոստվոյից մասնագիտացած է բոլոր տարիքների համար նախատեսված նրբագեղ զգեստների նախագծման և արտադրության բնագավառում. հարսանեկան զգեստներ՝ արված մինչև 400 մետր նյութից, էլեգանտ վերարկուներ՝ բոլոր եղանակների, հատկապես ձմեռային սեզոնի համար, կարճ և երկար զգեստներ, էլեգանտ զգեստներ, ավարտական տոների համար նախատեսված զգեստներ, գրասենյակային կոստյումներ, մանկական գիշերազգեստներ, դիմակներ և բժշկական կտորներ:

Ընկերությունը Կոստվոյից փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր կամ գործընկեր՝ ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9f40a106-8dce-4adb-91d1-5d2f2a5baa61>

Ծածկագիր. BOXK20201214001

Պուֆիկներ և հատակի բարձեր արտադրող ռումինական ընկերությունը տարածման համաձայնագրերի ներքո փնտրում է միջազգային բիզնես գործընկերներ

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է տարբեր ձևերի և չափերի գունավոր պուֆիկների և հատակի բարձերի արտադրության ոլորտում: Ընկերությունը շահագրգռված է գտնելու նոր միջազգային բիզնես գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագիր կնքելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/070716af-10a6-44c9-b536-1793369bce2b>

Ծածկագիր. BORO20201130001

Հարսանեկան և երեկոյան զգեստների ուկրաինական արտադրողը փնտրում է առևտրային գործակալներ, դիստրիբյուտորներ և գործընկերներ՝ աութսոփինգի համար

Ուկրաինական նորաձևության ոլորտի ընկերությունը, որը զբաղվում է հարսանեկան և երեկոյան զգեստների, մանկական զգեստների, քոլերի, բոլերոների և բուդուար հագուստի արտադրությամբ, փնտրում է առևտրային գործակալներ, դիստրիբյուտորներ և գործընկերներ՝ աութսոփինգի նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3210f6bb-abef-497b-b165-69a77b7eed32>


Ծածկագիր. BOUA20201128001

Կանանց համար նախատեսված հագուստ և կենցաղային սպիտակեղեն արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Կանանց համար նախատեսված հագուստ և կենցաղային սպիտակեղեն արտադրող լեհական ընկերությունը, որը կենտրոնացած այն հաժախարդների վրա, որոնք ունեն էկոլոգիական մտածողություն, ինչպես նաև հարգում են արդար առևտրի կանոնները, փնտրում է դիստրիբյուտորներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d7a20a7e-4468-4048-90ae-e60479f36f68>

Ծածկագիր. BOPL20201102003



Ֆրանսիական տեքստիլ արտադրող ընկերությունը տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո փնտրում է նոր գործընկերներ՝ արտաքին և ներքին սարքավորումների շուկայում (օրինակ՝ արևից պաշտպանություն):



Տեքստիլ արտադրող ընկերությունը, որը բավականին լավ գործում է Ֆրանսիայում, փնտրում է նոր գործընկերներ Եվրոպայում և դրանից դուրս՝ իր նորարարական արտադրանքի համար: Ընկերությունը ցանկանում է երկարաժամկետ համագործակցություն հաստատել արևապաշտպան դետալների դիստրիբյուտորների հետ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f5ba5922-0c3b-4daa-afde-5b555888bbe5>

Ծածկագիր. BOFR20190426001

Գործարար համագործակցության հարցումներ

Կանանց համար նախատեսված հագուստի ռումինական արտադրողը արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է տեքստիլի միջազգային մատակարարներ

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է կանանց հագուստի արտադրության մեջ, ներառյալ՝ զգեստներ, բլուզներ, կիսաշրջագգեստներ, տաբատներ և շապիկներ: Ապրանքներն արտադրվում են բամբակից, պլիսից, վիսկոզայից և վուշից: Ընկերությունը շահագրգռված է ընդլայնել իր ներկա գործընկերների ցանցը՝ բացահայտելով միջազգային բիզնես գործընկերների, որոնք արտադրական համաձայնագրերով կարող են գործվածքներ մատակարարել:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/df8a2166-8a53-44a9-8b76-264cf15f7438>

Ծածկագիր. BRRO20201028001

Երեխաների խնամքի ոլորտում գործող ֆրանսիական ընկերությունը փնտրում է տեքստիլ արտադրող, որը մասնագիտացած է բազմատեքստիլ և փրփուր բաղադրիչների հավաքակցման ոլորտում և համապատասխանում է էկոլոգիական պիտակին:



Երեխաների խնամքի ոլորտում գործող ֆրանսիական ընկերությունը փնտրում է տեքստիլ արտադրող, որը փորձառու է բազմատեքստիլ և փրփուր բաղադրիչների հավաքակցման ոլորտում: Գործընկերը պետք է կարողանա արտադրել բարձրորակ մանկական ապրանքներ՝ արտադրական կամ ենթապայմանագրի ներքո, որը համապատասխանում է

Էկոլոգիական պիտակին (Oeko-Tex®, GOTS):

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/081089c1-4ef6-475d-9677-a586a5b45ca5>

Ծածկագիր. BRFR20201119001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ինտերիերի դիզայնի և գիպսային ստեղծագործությունների (վահանակներ) և ցանցային վահանակների համար նյութեր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ:

Լեհական ընկերությունը, որը փորձառու է գիպսային մոդուլային վահանակների, ինչպես նաև փայտից, նրբատախտակից և MDF թերթերից պատրաստված ցանցային վահանակների ներքին դիզայնի և արտադրության ոլորտում, փնտրում է առևտրային միջնորդներ, որոնք կարող են հանդես գալ որպես դիստրիբյուտոր կամ գործակալ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5ff8ecf4-df7d-4f70-913c-9c3576c63267>

Ծածկագիր. BOPL20190702002



Տրանսպարենտ միկրո ջրիմուռների արտադրության համար կենսառեակտորներ արտադրող գերմանական ընկերությունը փնտրում է գործընկերներ համատեղ ձեռնարկություն և արտադրություն հիմնելու նպատակով

Գերմանական ընկերությունը հանդիսանում է տրանսգենային միկրո ջրիմուռների արտադրության ինտեգրված համակարգի համար կենսատեակտորների մշակող, արտադրող և օպերատոր: Այս ցածրարժեք բազմակողմանի ռեակտորները իդեալականորեն համապատասխանում են ինչպես կենսավառելիքի ջրիմուռների, այնպես էլ սննդի և/կամ կերային ջրիմուռների արտադրության համար: Ընկերությունը փնտրում է համատեղ ձեռնարկության և արտադրության գործընկերներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3a9b2b25-d023-4602-b5af-a141d8a199e9>

Ծածկագիր. BODE20201019001

Իտալական ընկերությունը, որը մշակել է նորարարական և էկոլոգիական տեխնոլոգիաներ լույսի հիմքերի և ինքնահարթեցվող ցեմենտի խառնուրդների կառուցման համար, փնտրում է համագործակցություն՝ լիցենզիոն համաձայնագրերի ներքո

Հյուսիսային Իտալիայում տեղակայված իտալական ընկերությունը, որն ունի 20 տարվա փորձ, մասնագիտացած է նորարարական լուսավորության հիմքերի և ինքնահարթեցվող ցեմենտի խառնուրդների արտադրության մեջ՝ բարձրորակ ջերմային և ձայնային մեկուսիչով: Այս ապրանքները արտադրվում են՝ օգտագործելով վերամշակված պոլիմերային հավելումներ: Նրանք գործընկերներ են փնտրում՝ լիցենզային համաձայնագրերով նոր շուկաներ մուտք գործելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/50b0e64d-da18-4563-a4f9-5c8884ecf88b>

Ծածկագիր. BOIT20201105001

Մակեդոնական ընկերությունը, որը մասնագիտացած է պողպատե կոնստրուկցիաների ոլորտում, առաջարկում է հանդես գալ որպես ենթակապալառու

Մակեդոնական ընկերությունը, որն ունի մեծ փորձ պողպատի արտադրության ոլորտում, առաջարկում է հանդես գալ որպես ենթակապալառու տարբեր պողպատե կառուցվածքների համար: Պողպատե կոնստրուկցիաները նախատեսված են ինչպես արդյունաբերական, այնպես էլ առևտրային շենքերի համար և տրամադրվում են ծախսարդյունավետ, հուսալի և պրոֆեսիոնալ ծառայության ներքո: Գործընկերներ կարող են լինել ՓՄՁ-ները շինարարության և մետաղամշակման արդյունաբերության ոլորտներից, որոնք շահագրգռված են ենթակապալմանագրային համաձայնագրով համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/53f4513d-9a6a-493e-b3da-7fc93dfe063f>

Ծածկագիր. BOMK20190114001

Մետաղական կոնստրուկցիաներ և մասեր արտադրող մակեդոնական ընկերությունն առաջարկում է արտադրական համաձայնագիր, աութսորսինգի և ենթապայմանագրային համաձայնագրեր

Մակեդոնական ընկերությունը, որը զբաղվում է մետաղական կոնստրուկցիաների և մասերի արտադրությամբ, առաջարկում է Եվրոպական երկրներում իրականացնել մետաղական կոնստրուկցիաների հավաքակցում, նորոգում և տեխնիկական սպասարկում՝ մեծ արտադրական կարողությունների համար՝ արտադրական, աութսորսինգի կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/aa766933-0c4e-4fc3-a59a-36b834184465>

Շածկագիր. BOMK20191204008

Ջրամեկուսիչ նյութերի ուկրաինական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ուկրաինական ընկերությունը գործունեություն է ծավալում արդյունաբերական, քաղաքացիական և հատուկ շինարարության մեջ օգտագործվող ջրամեկուսիչ նյութերի արտադրության, տարբեր նպատակների համար նախատեսված օբյեկտների նորոգման ոլորտում, ինչը հանգեցնում է հուսալի պաշտպանության ջրի քայքայիչ ազդեցությունից: Ընկերությունը փնտրում է շինարարական նյութերի դիստրիբյուտոր, ով ցանկանում է ընդլայնել իր արտադրանքի տեսականին՝ համագործակցելով տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d32622f3-d25b-44e6-a286-77d1ba1cca6a>

Շածկագիր. BOUA20200403002

Գործարար համագործակցության հարցումներ

Գերմանական ընկերությունը փնտրում է ենթակապալառու՝ փայտամշակման ոլորտի ինտերիերի գործերի համար

Միջին չափերի արհեստագործական ընկերությունը տեղակայված է Սաքսոնիայում և զոյություն ունի 2004 թվականից: Հյուսնության գործարանում ներկայումս աշխատում է 14 մարդ, ովքեր մասնագիտացած են թանգարանների և պատկերասրահների ներքին պիտույքակազմի արտադրության ոլորտում: Ընկերությունը փնտրում է մոտավորապես նույն չափի ենթակապալառու ընկերություն՝ արտադրության և հավաքման համար, ցուցահանդեսային շինարարության/առևտրի տոնավաճառի շինարարության ոլորտից: CNC արտադրության օգտագործման և CAD ծրագրակազմի հմուտ օգտագործման փորձը պարտադիր է:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/173b461c-d6fd-4908-89fe-bb570cfad1df>

Շածկագիր. BRDE20201216001

Շինարարական արդյունաբերության համար ապրանքներ մատակարարող ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է աերոգոլային ակրիլային գծանշման ներկեր մատակարարման համաձայնագրի ներքո

Շինարարության ոլորտին մի շարք ապրանքներ մատակարարող մեծբրիտանական ընկերությունը փնտրում է մատակարար՝ 750 մլ. աերոգոլային ակրիլային գծանշման ներկեր, սկզբնապես յոթ գույներով՝ մատակարարման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Եթե ներկեր արտադրողը հետաքրքրված է նկարագրության մեջ նշված քանակներով, ապա այս ընկերությունը կհամագործակցի արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/132fb373-968e-48f2-9d63-d4b1fe849fb0>

Ծածկագիր. BRUK20200204001

R&D



H2020 LC-GD-2-1-2020: Ցամաքային և օֆշորային վերականգնվող էներգիայի նորարարական տեխնոլոգիաներ և դրանց ինտեգրում էներգետիկ համակարգում

Բասկյան ընկերությունը, որը մասնագիտացած է գիտահետազոտական ամբողջական լուծումներ մշակելու ոլորտում, արդյունաբերական գործընկեր է փնտրում H2020 European Green Deal-ի մրցույթի ներքո կոնսորցիումի կազմն ամբողջական դարձնելու համար: Այն փնտրում է էներգետիկ ոլորտի գործընկեր, որն ունակ է զբաղվել շուկայավարման և բիզնեսի հարցերով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/34fbf2e4-0bf7-416c-8d2c-3942e6cabdb6>

Ծածկագիր. RDES20201230001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական SS ընկերությունը, որը մասնագիտացած է հեռավար բժշկական հետազոտության ամպային տեխնոլոգիաների ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ լիցենզային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

SS ընկերությունը Լեհաստանից, որը ստեղծել է իր գույքային ամպային ծրագիրը, որը բժիշկներին տրամադրում է գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս հիվանդների ինտուիտիվ, արդյունավետ, անվտանգ հեռավոր և տեղական ախտորոշում իրականացնել, փնտրում է գործընկերներ՝ լիցենզիոն համաձայնագիր ստորագրելու նպատակով: Լիցենզավորված անձը պետք է փորձ ունենա բժշկական ծրագրակազմի ներդրման մեջ և պատրաստ լինի ծրագրեր վաճառել արտերկրում՝ մշակելով վաճառքի ռազմավարություն, ձեռք բերելով հաճախորդներ և ստեղծելով ապրանքանիշի իմիջ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f129ff15-b27a-4e6b-8678-da5df8f4714c>

Ծածկագիր. BOPL20201215002

Իսպանական կիրքեռանվտանգության ոլորտի ընկերությունը մասնագիտացած է լոգիստիկայի, անվտանգության և վերահսկողության կառավարման SS լուծումների բնագավառում և փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Իսպանական նորարարական ընկերությունը, որը մասնագիտացած է ծրագրային ապահովման հատուկ մշակումներին և լուծումների բնագավառում, մասնավորապես՝ լոգիստիկայի, անվտանգության (ներառյալ կիրքեռանվտանգության) և վերահսկման գործընթացներ, ինտերիերի և էքստերիերի և այլն, փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5a50a90e-6696-4b52-ab5d-a5f9d56ef025>

Ծածկագիր. BOES20201120001

Ռումինական SS ընկերությունը, որը մասնագիտացած է կրթական ծրագրերի մշակման ոլորտում, ցանկանում է համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ տարածման ծառայությունների

համաձայնագրերի ներքո:

Ռումինական ՓՄՁ-ն կրթական նպատակներով նախագծում և առևտրայնացնում է համակարգչային ծրագրակազմը: Ընկերությունը շահագրգռված է ուսումնասիրել արտաքին շուկայական նոր հնարավորությունները և համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Գործընկերները պետք է լինեն իրենց ծագման երկրներից:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b150a1e5-39ce-46a8-84fa-a9c034412d21>

Ծածկագիր. BORO20201208002

Գործարար համագործակցության հարցումներ

Վեբ ծրագրեր մշակող ռումինական ընկերությունը փնտրում է գործընկեր՝ աութսորսինգային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ռումինական ընկերությունը գործընկերներ է փնտրում աութսորսինգի համաձայնագիր կնքելու համար, ովքեր մասնագիտացած են վեբ մշակման և սպասարկման, վեբ ձևավորման, ստեղծագործական շուկայավարման, էլ. փոստով շուկայավարման արշավների, Facebook-ում և LinkedIn-ում գովազդային արշավների, սոցիալական մեդիայի շուկայավարման և որոնող համակարգերի օպտիմիզացման ոլորտում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2c4c1604-b919-4855-a2e0-dd57594fbcf7>

Ծածկագիր. BRRO20200617001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

Հունական ընկերությունը մշակում և արտադրում է ֆունկցիոնալ սնունդ և մաշկի խնամքի միջոցներ՝ կենսաֆունկցիոնալ հատկություններով և փնտրում է դիստրիբյուտորներ

Հունական փոքր ընկերությունը մշակում և տրամադրում է սերտիֆիկացված ֆունկցիոնալ սնունդ և սննդանյութեր, որոնք ոգեշնչված են հունական կենսաբազմազանությունից, որոնք կազմված են Կրետեից, Աթոս և Օլիմպոս լեռներից ընտրված օրգանական բաղադրիչներից: Ապրանքներն արտադրվում են որակի խիստ ստանդարտներով, ինչի մասին վկայում են բարձրակարգ գիտական հրապարակումները և լիցենզավորվում են առաջատար կարգավորող մարմինների կողմից: Ընկերությունը փնտրում է բացառիկ գործընկերներ՝ արտադրանքը խթանելու և տարածելու կարողությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/340b72d0-0068-47df-8151-371de34f13e5>

Ծածկագիր. BOGR20210111001

Սրվակներ արտադրող բուլղարական ընկերությունը փնտրում է դեղագործական և կոսմետիկ ընկերություններ արտադրական և առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է սրվակների՝ ավելի կոնկրետ դատարկ այլումինե ծավրոջ և լամինացված սրվակների արտադրության մեջ, փնտրում է դեղագործական և կոսմետիկ ոլորտի ընկերություններ, որոնք մասնագիտացած են գելերի, քսուքների և յուղաքսուքների արտադրության մեջ. ընկերությունը կհամագործակցի առևտրային համաձայնագրերի ներքո վաճառողների/գործակալների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0d3271c1-edc5-4b3f-8912-f25c77b2fff1>

Ծածկագիր. BOBG20201202002

Ուկրաինական ընկերությունը փնտրում է կոսմետիկայի դիստրիբյուտորներ

Բնական բաղադրիչներով բարձրորակ կոսմետիկ արտադրանք արտադրող ուկրաինական ընկերությունն ամբողջ աշխարհում փնտրում է դիստրիբյուտորներ, որոնք աշխատում են դեղատների, կոսմետիկայի խանութների հետ: Ընկերության արտադրանքը ներառում է կոսմետիկա մազերի խնամքի, մաշկի խնամքի, անձնական հիգիենայի և մարմնի խնամքի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9b10b70e-2f32-48bd-8036-76795d190296>

Առողջապահություն



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

COVID-19. Չեխական ՓՄՁ-ն առաջարկում է թափանցիկ ռեսպիրատոր լիցենզիայի, տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո

Չեխական ՓՄՁ-ն մշակել է թափանցիկ ռեսպիրատոր H13 ֆիլտրման մակարդակով փոխարինվող HEPA (բարձր արդյունավետության մասնիկներով օդ) ֆիլտրերով: Ընկերությունը փնտրում է լիցենզիայի, առևտրային գործակալության և (կամ) տարածման ծառայությունների համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4336c580-84ee-4e8f-8bb7-a5f0b8c6e9a5>

Ծածկագիր. BOCZ20201209001

Լաբորատոր սպառման նյութեր և այլ պլաստմասսայից արտադրանք արտադրող սլովենական ընկերությունը փնտրում է ներկայացուցիչներ և գործընկերներ՝ տարածման նպատակով

Սլովենական ընկերությունը լաբորատոր սպառվող նյութերի, մանրէագերծման և ախտահանման համար պլաստմասսայից արտադրանքների փորձառու արտադրող և վաճառող է նաև



հատուկ նիշային տարբերակով, որոնք կարող են արտադրվել նույնիսկ ավելի փոքր քանակությամբ: Ընկերությունը փնտրում է օտարերկրյա գործընկերներ՝ իրենց համապատասխան շուկաներում վերը նշված արտադրանքը ներկայացնելու և/կամ տարածելու համար (առևտրային գործակալության, տարածման ծառայությունների համաձայնագիր):

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6382a7d5-5dee-4d98-b537-013de2dc1064>

Ծածկագիր. BOCZ20201209001

Դանիական բիոտեխնոլոգիական նորաստեղծ ընկերությունը փնտրում է կոգնիտիվ ֆունկցիան խթանող առողջարար ըմպելիքի դիստրիբյուտորներ

Դանիական բիոտեխնոլոգիական նորաստեղծ ընկերությունը մշակել է գազավորված առողջարար ըմպելիք, որը խթանում է կոգնիտիվ ֆունկցիան և առողջությունը: Ապրանքը մշակվել է մոլեկուլային կենսաբաններից, բժիշկներից և սննդաբաններից բաղկացած թիմի կողմից: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իրենց շուկան՝ դիստրիբյուտորների կամ լիցենզային պայմանագրերի միջոցով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/dd5f1dd9-cf91-4377-8483-455e103d07bc>

Ծածկագիր. BODK20210112001

Գործարար համագործակցության հարցումներ

Բժշկական/դեղագործական արտադրանքի և սարքերի ոլորտում գործող մալթական դիստրիբյուտոր և փորձառու վաճառող հանդիսացող ընկերությունը գործընկերներ է փնտրում առևտրային գործակալության և տարածման համաձայնագրերի ներքո

Մեծ պորտֆելով մալթական ընկերությունը կառավարում և տարածում է դեղագործական, բժշկական սպառվող նյութեր, ունիվերսալ նյութեր, ներարկային դեղեր և կենսաքիմիկատներ: Այն ոլորտի առաջատար ընկերությունն է և լիցենզավորված է Մալթայի դեղորայքների հավաստագրման մարմնի կողմից: Ընկերությունն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային գործընկերներին առաջարկում է իր հաստատված հաճախորդների ցանցերը, առևտրային գործակալության կամ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8e44d631-22dc-4e89-bddf-ffa1fd2af715>

Ծածկագիր. BRMT20200825001




Ձեռագործ արծաթե զարդերի ռուսիական արտադրողը տարածման համաձայնագրերի ներքո փնտրում է միջազգային բիզնես գործընկերներ

Ռուսիական ընկերությունը մասնագիտացած է արծաթյա զարդերի արտադրության մեջ հետևյալ կատեգորիաներում՝ ականջօղեր, ապարանջաններ, վզնոցներ և մատանիներ: Բոլոր ապրանքները ձեռագործ են՝ հիմնված ընկերության ինքնատիպ նմուշների վրա, որոնք կենտրոնացած են պարզ արվեստի վրա, որը միավորում է արծաթը, էմալը, ապակե հատիկներն ու կաշին: Ընկերությունը շահագրգռված է գտնելու նոր միջազգային բիզնես գործընկերներ՝ իր արտադրանքը (փոքր քանակի սերիական արտադրանք) տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո տարածելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9f694175-21a6-47ee-b4d3-f9f602866c29>

Ծածկագիր. BORO20201214001



Չեխական ՓՄՁ-ն առաջարկում է հավասարակշռության աթոռ՝ տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո

Չեխական ՓՄՁ-ն մշակել և շուկայահանել է հավասարակշռված աթոռ, որը թույլ է տալիս մարմնի բնական շարժումը բոլոր ուղղություններով, հարմար է գրասենյակում կամ տան աշխատասենյակում շուրջօրյա նստելու համար, ուղղում է մեջքը և կանխում ողնաշարի, վզի հատվածքի կորացումը: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/04298da6-c0ce-4e14-863e-b3cbf72776db>

Դարակների համակարգերի և պրոֆեսիոնալ հյուրընկալության սարքավորումների պորտուգալական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Պորտուգալական ընկերությունը, որն արտադրում է պրոֆեսիոնալ սարքավորումներ և կահույք, մասնագիտացած է պահեստային դարակների համակարգերում, ինչպես նաև հյուրընկալության ոլորտում (HORECA), փնտրում է դիստրիբյուտորներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/45d25ac2-2a17-4be1-afab-09726647476c>

Մլովենական ֆիլտրող քարթիջներ և ֆիլտրող էլեմենտներ արտադրող ընկերությունը գործընկերներ է փնտրում տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո

Մլովենական ընկերությունը, որը մասնագիտացած է ֆիլտրող քարթիջների և ֆիլտրող էլեմենտների արտադրության մեջ, պատրաստ է ընդլայնվել նոր շուկաներում և փնտրում է ֆիլտրող քարթիջների և ֆիլտրի բլոկների դիստրիբյուտորներ: Ընկերությունը պատրաստ է երկարաժամկետ համագործակցություն հաստատել տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/db1d505c-9c4d-4669-b18f-8e0b6a60e110>

Ֆիննական քսիլիտոլ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆիննական ընկերությունն արտադրում է քսիլիտոլային պաստիլներ, ատամի մածուկ, մաստակ և չոր բերանի պաստիլներ: Քսիլիտոլը բնական քաղցրացուցիչ է և քսիլիտոլի ատամնաբուժական օգուտները բավականին լավ հաստատված են: Ընկերությունը տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո փնտրում է գործընկերներ, ովքեր այդ արտադրանքը կներառեն իրենց պորտֆելում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/87e7794d-a44a-43aa-a64c-92ca70bbeb39>

Շքեղ կահույք արտադրող իսպանական ընկերությունը փնտրում է բարձրակարգ կահույքի և լոգարանի կահույքի դիստրիբյուտորներ

Այս բիզնեսը իսպանական ընտանեկան բիզնես է, երիտասարդ և դինամիկ, որը նախագծում և արտադրում է բացառիկ ձեռագործ կահույք: Ընկերության առաջարկը ներառում է՝ կահույք, դեկորատիվ պարագաներ, տեքստիլ և



լուսավորություն: Ընկերությունը փնտրում է միջազգային դիստրիբյուտորներ բարձրակարգ կահույքի և սանհանգույցի կահույքի ոլորտում, ինչպես նաև ճարտարապետներ, դեկորատորներ և ինտերիերի դիզայներներ, ովքեր փնտրում են դեկորացիաների միջազգային առաջարկ: Ընկերությունը բաց է ընդլայնվելու Եվրոպական միության և երրորդ երկրների շուկայում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ed56a5dc-2dff-440e-8e11-a1fb4493ef4b>

Ծածկագիր. BOES2020112001

Լողավազանի ֆիլտրերը լվանալուց հետո ողողման ջրի մաքրման և վերականգնման նորարարական տեխնոլոգիայի լեհական արտադրողն առաջարկում է արտադրական համաձայնագրեր

Լեհական նորամուծությունը վերաբերում է ողողման ջրի մաքրման տեխնոլոգիային, որը մշակվել է լեհական ընկերության հետազոտությունների և զարգացման կենտրոնի շրջանակներում: Այս տեխնոլոգիան հնարավորություն է տալիս կրկնակի օգտագործել լողավազանների ֆիլտրերի լվացումները, ինչը 96%-ով նվազեցնում է ծորակի ջրի անհրաժեշտությունը, նվազեցնում դրա ջեռուցման և թափոնների հեռացման հետ կապված ծախսերը: Ընկերությունը գործընկերներ է փնտրում՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/928ea11b-d1bb-4e5b-a163-dca01255566b>

Ծածկագիր. BOPL20201127001



Գործարար համագործակցության հարցումներ

Բաշխիչ ցանցի համար ընկերությունը փնտրում է ավտոպահեստամասերի մատակարարներ

Ավտոմեքենաների բաշխիչ ցանց հիմնելու և սկսելու նպատակով, ավտոպահեստամասերի գերմանացի դիստրիբյուտորը փնտրում է գործընկերներ, ովքեր մատակարարում են մեքենաների, բեռնատարների և

ավտորուսների, ինչպես նաև արդյունաբերական և գյուղատնտեսական մեքենաների պահեստամասեր: Գերմանական ընկերությունն առաջարկում է այդ ապրանքների տարածումը Եվրոպայում: Համագործակցությունը հիմնված կլինի մատակարարման համաձայնագրի վրա:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2980bb39-33fe-4723-9eb3-618b927b5459>

Ծածկագիր. BRDE20201110001


Հիվանդանոցային թերթերի ֆիննական արտադրողը արտադրության կամ մատակարարի համաձայնագրի ներքո փնտրում է ցելյուլոզային բամբակի և կրեպի թղթի նոր արտադրողներ կամ մատակարարներ

Ֆիննական ընկերությունը մասնագիտացած է հիվանդանոցային թերթերի արտադրության մեջ: Ընկերությունը փնտրում է ցելյուլոզային բամբակ և կրեպի թուղթ արտադրողներ կամ մատակարարներ Եվրոպայում. նախընտրելի են արտադրողները: Համագործակցությունն առաջարկվում է արտադրական կամ մատակարարման համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/367f3071-5c98-4094-9c62-e18e548f95a6>

Ծածկագիր. BRFI20200511001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Արտաթերապիայով ծծակ՝ երեխաներին հանգստացնելու և բուժելու համար

Իսպանացի երկու ձեռնարկատերեր նորածինների համար ծծակ են պատրաստել, որը նրանց միաժամանակ և՛ հանգստացնում է, և՛ բուժում է, շնորհիվ այն համակարգի, որն իր մեջ ներառում է բույրեր: Նրանք փնտրում են մանկաբուժության կամ արտաթերապիայի ոլորտի գործընկերներ, որոնք պատրաստ են նախագծում ներդրումներ կատարել և նախագծի վերջին զարգացումները համատեղ իրականացնել՝ եվրոպական շուկա դուրս գալու կամ համակարգի համար նոր ծրագրեր հայտնաբերելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c7cb90fb-fecb-44b2-a242-0ea949e4b252>

Ծածկագիր. TOES20191223001

Նյութափոխանակության համախտանիշի բնական արտադրանքի վրա հիմնված մոդելավորում. Միլիկոնային և in vivo մեթոդների համատեղում PPAR γ միջուկային ընկալիչների հնարավոր դերը ուսումնասիրելու համար

Բուլղարական հետազոտական թիմն առաջարկում է մանր մոլեկուլների ֆարմոկոկինետիկ և դեղադինամիկական պրոֆիլները կանխատեսելու համար հաշվարկային մոդելավորման մոտեցումներ: Այն թույլ է տալիս արագորեն գննել և առաջնահերթ ընտրել միացությունները՝ հիմնված նյութափոխանակության և թունավորության գնահատման վրա, որը կապված է մոլեկուլի՝ օրալ կիրառման և մոլեկուլի դեղաբանական ներուժի հետ՝ նյութափոխանակության համախտանիշի կանխարգելման / բուժման համար: Հետազոտողները փնտրում են տեխնիկական համագործակցության համաձայնագիր և (կամ) ֆինանսական համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fc8f2c0d-4cfb-47a8-9ed1-4a5e306df5fa>

Ծածկագիր. TOBG20191202001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Իսպանական իրավաբանական անձը փնտրում է նորարարական տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են բուսականության գոյատևումը կլիմայի ծանր պայմաններում

Իսպանական իրավաբանական անձը սկսել է կանաչ գոտի կառուցել՝ օգտագործելով դեգրադացված, լքված շատ հողեր: Ծառ չի մնացել, և վերափոխումը մարտահրավեր է՝ պայմանավորված կլիմայի ծանր պայմաններով: Ամռան ամիսներին ավելացող ջերմությունը պահանջում է հատուկ տեխնոլոգիաներ նոր տնկված ծառերի գոյատևման համար: Իրավաբանական անձը փնտրում է տեխնիկական օժանդակությամբ առևտրային համաձայնագրեր՝ տեխնոլոգիաների կիրառման համար, որոնք թույլ են

տալիս, որպեսզի բուսականությունը գոյատևի ծայրահեղ ջերմային պայմաններում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2d25f68c-8d1c-4787-901e-14e04f8d6f4e>

Ծածկագիր. TRES20201216001

5G կապի միջոցով խելացի արդյունաբերության համար ծրագրերի համատեղ մշակում

Հոլանդական հեռահաղորդակցական ընկերությունը, որն ունի 5G ցանց ՓՄՁ հաճախորդների համար, շահագրգռված է համատեղ մշակել և աջակցել խելացի արդյունաբերության նոր ծրագրերին՝ օգտագործելով կամ հիմնված 5G տեխնոլոգիայի վրա: Ընկերությունը փնտրում է սենսորային/իրերի ինտերնետի (IoT), լրացված իրականության/խառը իրականության, վիզուալ հսկողության կամ ռոբոտաշինության մեջ մասնագիտացած գործընկերներ՝ տեխնիկական համագործակցության համաձայնագրի կամ առևտրային համաձայնագրի ներքո՝ տեխնիկական օժանդակությամբ համագործակցելու նպատակով: Այս հարցումը վերաբերում է նորարարության մարտահրավերին, որը հրապարակվել է բաց նորարարական հարթակում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/989fa484-e119-404b-b776-07ce349606d8>

Ծածկագիր. TRNL20200917001

Նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2021 թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ ամիսների ընթացքում կազակերպվող միջոցառումները:

Փետրվար

24/02/2021	Innovation and Digitalisation in the Travel Industry 2021 Մարիբոր (Մլովենիա) Համագործակցության հաստատման այս միջոցառումն ուղղված է շրջիկ արդյունաբերության համար թվային վերափոխման համար՝ հիմնականում կենտրոնանալով Բանացանցի, տվյալների վերլուծության, արհեստական բանականության և այլ հարակից ոլորտների վրա: https://een.ec.europa.eu/tools/EVE/Event/DownloadAttachment?attachmentID=627ccf1a-5b60-46b0-a27b-8e0cd48bb0ac
------------	--

Մարտ

24/02/2021	BIOKET 2021 Brokerage event - Lille - 15-19 March 2021 - Digital Edition Լիլ (Ֆրանսիա) Կենսազանգվածի նկատմամբ կիրառվող գործընթացներին և տեխնոլոգիաներին նվիրված գլոբալ համաժողովը տեղի կունենա առցանց տարբերակով՝ վեբինարներ և B2B հանդիպումներ՝ կապված կորոնավիրուսի համաճարակի հետ: https://bioket-2021.b2match.io/
------------	--

Մարտ

12/04/2021	BIOKET 2021 Brokerage event - Lille - 15-19 March 2021 - Digital Edition Հաննովեր (Գերմանիա) Համագործակցության հաստատման այս միջոցառումը ՓՄՁ-ներին և հետազոտական կազմակերպություններին հնարավորություն է տալիս գտնել և հանդիպել գործընկերներ՝ առևտրային համաձայնագրերի և հետազոտական ու տեխնոլոգիական համագործակցության համար: Միջոցառումը վիրտուալ վայր է նոր տեխնոլոգիաներ, հասկացություններ և լուծումներ ձեռք բերելու, ինչպես նաև պոտենցիալ մատակարարների և բիզնես գործընկերների հետ կապ հաստատելու համար: http://www.technologycooperationdays.com/
------------	--

ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _ SENIOR EXPERTEN SERVICE (SES)

SES ծրագրի առավելությունները

- Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում
- Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում
- Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում
- Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում
- Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար
- Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից
- Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից
- Հանրային և բժշկական հիմնարկները
- Կրթական ձեռնարկությունները
- Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E mariam.mazhinyan@armenien.ahk.de

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Custom/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

*հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես
առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են
հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին
ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական
Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը:
Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը,
Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ
անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող
բովանդակությունն օգտագործվելու դեպքում: